ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

DOI: 10.54503/978-9939-970-23-3-52

Դավթյան Ալվինա
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր,
հայոց լեզվի և գրականության ուսուցիչ.
alvina.davtyan81@gmail.com
Արշակյան Երազիկ
ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձորի միջնակարգ դպրոց,
հայոց լեզվի և գրականության ուսուցիչ.
erazikarshakyan@gmail.com
Բադալյան Դիանա
ՀՀ Երևանի Ալ. Քեմուրջյանի անվան թիվ 170 ավագ դպրոց,
անգլերենի ուսուցիչ.
badalyandiana-10@aspu.am

Բանալի բառեր. բառագիտություն, դպրոցական ուսուցում, բառապաշարի հարստացում, մեթոդաբանություն, մարտահրավերներ, ինտերակտիվ մեթոդներ, իմաստաբանություն։

Նախաբան

Բառագիտությունը լեզվաբանության համակարգի հիմնարար բաժիններից է, որի ուսուցումը բացառիկ նշանակություն ունի սովորողի լեզվական, ճանաչողական, հաղորդակցական և ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում։ Բառի իմաստը, նրա կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները, հոմանշային, հականշային, համանունային և հարանունային հարաբերությունները, բառի գործածության ոլորտը, ոճական արժեքը և

համատեքստային դրսևորումները հասկանալը սովորողին հնարավորություն են տալիս ոչ միայն յուրացնելու լեզվական գիտելիքներ, այլև դրանք կիրառելու իրական հաղորդակցական իրավիճակներում: Բառագիտությունը հայոց լեզվի ուսուցման կարևորագույն և առանցքային բաժիններից մեկն է, որը ձևավորում է սովորողների լեզվամտածողությունը, հաղորդակցական կարողությունները և բառապաշարի հարստությունը: Ժամանակակից հանրակրթական դպրոցում բառագիտության դասավանդումը կանգնած է մի շարք լուրջ մարտահրավերների առջև, որոնք պայմանավորված են ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ զարգացմամբ, այնպես էլ աշակերտների ընթերցասիրության նվազմամբ և լեզվական միջավայրի փոփոխություններով: Սույն հոդվածի նպատակն է վեր հանել դպրոցում բառագիտության ուսուցման հիմնախնդիրները և առաջարկել արդյունավետ մեթոդական լուծումներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը: Ժամանակակից դպրոցում, սակայն, բառագիտության ուսուցումը հայտնվել է նոր իրողությունների պայմաններում: Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը, սոցիալական ցանցերի և հաղորդակցության առցանց ձևերի տարածումը, օտարալեզու տեղեկատվական հոսքերի աճը, կարճ և պարզեցված հաղորդագրությունների գերակշռությունը փոխում են սովորողների լեզվական վարքը: Միևնույն ժամանակ թվային միջավայրը կարող է ոչ միայն խնդրի աղբյուր լինել, այլև արդյունավետ մեթոդական հնարավորություն՝ բառապաշարի ուսուցումը առավել տեսանելի, ինտերակտիվ, անհատականացված և հաղորդակցական դարձնելու համար: Այս համատեքստում բառագիտության ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի կողմից գիտելիքի փոխանցմամբ, այլև այնպիսի կրթական միջավայրի ստեղծմամբ, որտեղ սովորողը հնարավորություն կունե-

նա բառը տեսնել, լսել, համեմատել, վերլուծել, որոնել, դասակարգել և, ամենակարևորը, կիրառել տարբեր հաղորդակցական իրավիճակներում:

Հոդվածի խնդիրներն են՝ բացահայտել բառագիտության ուսուցման հիմնական դժվարությունները, ուսումնասիրել թվային տեխնոլոգիաների կիրառման մեթոդական հնարավորությունները, ներկայացնել բառագիտության դասերի կազմակերպման ժամանակակից գործիքներ, հիմնավորել տեքստակենտրոն և հաղորդակցական ուսուցման արդյունավետությունը և առաջարկել դասի կազմակերպման գործնական մոդելներ:

1. Բառագիտության ուսուցման ժամանակակից մարտահրավերները

Բառագիտության ուսուցման կարևոր մարտահրավերներից մեկը տեսական գիտելիքի և դրա գործնական կիրառության միջև հնարավոր անհամապատասխանությունն է: Սովորողը կարող է ճանաչել և սահմանել հոմանիշ, հականիշ, համանուն կամ հարանուն հասկացությունները, սակայն դրանց գործածությունը իրական խոսքային իրավիճակներում պահանջում է լրացուցիչ վերլուծական և հաղորդակցական կարողություններ: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ բառապաշարի վերաբերյալ գիտելիքի մեխանիկական վերարտադրությունը ինքնին դեռևս բավարար պայման չէ բառապաշարային կարողության լիարժեք ձևավորման համար: Ուստի բառագիտության ուսուցումը պետք է ուղղված լինի ոչ միայն լեզվական հասկացությունների յուրացմանը, այլև դրանք տարբեր համատեքստերում ճանաչելու, ընտրելու և նպատակահարմար կիրառելու կարողության զարգացմանը[1]:

[1] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 30-ի N 44-Ն հրաման, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում

Դպրոցական պրակտիկայում բառագիտության ուսուցումը կարող է հանդիպել կառուցվածքային և մեթոդական բնույթի մի շարք խոչընդոտների։

Առաջին հիմնական մարտահրավերը տեսական նյութի գերակայությունն է գործնական կարողությունների ձևավորմանը միտված առաջադրանքների նկատմամբ։ Սովորողները կարող են յուրացնել հոմանիշ, հականիշ, համանուն և հարանուն հասկացությունների սահմանումները, սակայն դժվարանալ դրանք տարբերակել և նպատակահարմար կիրառել սեփական բանավոր ու գրավոր խոսքում։ Ուստի համապատասխան գիտելիքի ուսուցումը պետք է զուգակցվի դրա գործնական կիրառությամբ և հաղորդակցական իրավիճակներում բառերի ընտրության ու գործածության վարժություններով[2]։

Երկրորդ մարտահրավերը սովորողների բառապաշարի զարգացման և ժամանակակից լեզվական միջավայրի պահանջների միջև առաջացող անհամապատասխանությունն է։ Թվային հաղորդակցության տարածումը սովորողների առօրյա խոսքում ընդլայնել է կրճատումների, ժարգոնային արտահայտությունների, օտարաբանություններ և ոչ ստանդարտ գրության կիրառությունը։ Սակայն այս երևույթների ազդեցությունը պետք է դիտարկել ոչ թե միանշանակ բացասական, այլ լեզվական միջավայրի փոփոխության համատեքստում։ Դպրոցի խնդիրն է սովորողների մեջ ձևավորել տարբեր լեզվական իրավիճակներում բառապաշարի նպատակահարմար ընտրության և գրական լեզվի նորմերին համապատասխան խոսքի կարողություն։ Ուսումնական նյութի ընտրության ժամանակ կարևոր է

«Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին»։

[2] **Սուքիասյան Ա.**, *Ժամանակակից հայոց լեզու* (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Ե., 2004, էջ 85–88։

նաև հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունները և հաղորդակցական փորձը[3]:

Երրորդ մարտահրավերը լեզվական միջավայրի փոփոխությունն է: Թվային հաղորդակցության մեջ տարածված կրճատումները, ժարգոնային բառերը, օտարաբանությունները և ոչ ստանդարտ գրությունը կարող են դառնալ բառագիտության ուսուցման նյութ: Դրանք հնարավորություն են տալիս սովորողներին համեմատելու գրական, խոսակցական, մասնագիտական և ժարգոնային բառապաշարը, բացահայտելու դրանց գործածության ոլորտները և տարբերակելու լեզվական միջոցների նպատակահարմար կիրառությունը: Այս մոտեցմամբ դպրոցը ոչ թե անտեսում է սովորողների առօրյա լեզվական միջավայրը, այլ այն վերածում է քննադատական վերլուծության և լեզվական գիտակցության զարգացման նյութի:

Չորրորդ մարտահրավերը սովորողների անհատական լեզվական տարբերություններն են: Նույն դասարանում կարող են սովորել բառապաշարի տարբեր ծավալ և լեզվական պատրաստվածության տարբեր մակարդակ ունեցող աշակերտներ: Այդ պատճառով բառագիտության դասավանդման ընթացքում անհրաժեշտ է կիրառել տարբերակված առաջադրանքներ, որոնք հնարավորություն կտան նույն ուսումնական նպատակը իրականացնել տարբեր բարդության մակարդակներով: Այս մոտեցումը համապատասխանում է սովորողակենտրոն և կարողունակությունների զարգացմանը միտված ուսուցման սկզբունքներին:

2. Ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառումը որպես լուծում

Նշված մարտահրավերները հաղթահարելու համար անհրաժեշտ է բառագիտության ուսուցումը կազմակերպել ոչ միայն վերար-

[3] **Գյուլամիրյան Ջ.**, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*, Ե., 2018, էջ 142–145:

տադրողական, այլև փոխներգործուն, հաղորդակցական և կիրառական մեթոդների համադրմամբ: Հանրակրթության պետական և հայոց լեզվի առարկայական չափորոշիչները շեշտադրում են կարողունակությունների ձևավորումը, լեզվական գիտելիքների կիրառումը, սովորողների ինքնուրույն գործունեությունը, վերլուծական և հաղորդակցական կարողությունների զարգացումը[4]:

Բառագիտության ուսուցումը նպատակահարմար է կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր նոր բառի կամ բառագիտական հասկացության յուրացումը զուգորդվի դրա իմաստի բացահայտմամբ, տարբեր համատեքստերում կիրառության դիտարկմամբ և սեփական խոսքում օգտագործմամբ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս տեսական գիտելիքը կապելու իրական հաղորդակցական իրավիճակների հետ:

Արդյունավետ մեթոդներից է բառային քարտեզագրման (Concept Mapping) մեթոդը, որի կիրառմամբ սովորողները կարող են ներկայացնել բառի իմաստային կապերը, հոմանշային և հականշային հարաբերությունները, բառի գործածության ոլորտները և այլ լեզվական առանձնահատկություններ: Նման առաջադրանքները կարող են նպաստել համեմատելու, դասակարգելու, կապեր բացահայտելու և վերլուծելու կարողությունների զարգացմանը: Սակայն մեթոդի արդյունավետությունը պետք է դիտարկել ոչ թե որպես ինքնաբերաբար ապահովվող արդյունք, այլ որպես ուսուցչի կողմից նպատակային կազմակերպվող ուսումնառության գործընթացի արդյունք:

Մեկ այլ մոտեցում է թվային գործիքների նպատակային ինտեգրումը ուսուցման գործընթացում: Թվային բառարանները, էլեկտրո-

[4] ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում՝ «Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին»: Փաստաթուղթը սահմանում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:

նային հարցաշարերը, խաղայնացված ուսումնական հարթակները, օրինակ՝ Kahoot-ը և Quizizz-ը, կարող են օգտագործվել բառապաշարի ամրապնդման, արագ հետադարձ կապի ապահովման և սովորողների անհատական ու խմբային աշխատանքի կազմակերպման նպատակով: Լեզվական կորպուսների և թվային բառարանների կիրառումը կարող է նաև զարգացնել բառի իմաստը, գործածության հաճախականությունը և համատեքստային առանձնահատկությունները ինքնուրույն ուսումնասիրելու կարողությունը: Միևնույն ժամանակ թվային գործիքի ընտրությունը պետք է պայմանավորված լինի դասի նպատակի, սովորողների տարիքային առանձնահատկությունների և ուսումնական առաջադրանքի բովանդակության համապատասխանությամբ:

Թվային կրթական միջավայրում բառագիտության ուսուցման նպատակը չի կարող սահմանափակվել բառագիտական եզրույթների և սահմանումների յուրացմամբ: Ժամանակակից մոտեցումը պահանջում է ձևավորել բառապաշարային այնպիսի կարողություններ, որոնք սովորողը կարող է կիրառել տարբեր հաղորդակցական իրավիճակներում՝ համապատասխան բառը ընտրելու, դրա իմաստը համատեքստում մեկնաբանելու, բառային կապերը բացահայտելու և սեփական խոսքում նպատակահարմար օգտագործելու միջոցով: Այդ պատճառով ուսումնական նյութը պետք է մատուցել մատչելի, հաջորդական և սովորողի ակտիվ գործունեությունը խթանող ձևով[5]:

Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել մի քանի հիմնական նպատակ: Առաջին՝ սովորողը պետք է կարողանա ճանաչել և

[5] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 30-ի N 44-Ն հրաման՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1–6-րդ, «Հայոց լեզու» 7–12-րդ, «Գրականություն» 7–9-րդ և «Հայ գրականություն» 10–12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին»:

բացատրել նոր բառի իմաստը։ Երկրորդ՝ պետք է կարողանա բառը կապել արդեն հայտնի բառերի հետ՝ կազմելով իմաստային խմբեր, հոմանշային և հականշային շարքեր։ Երրորդ՝ պետք է կարողանա բառը կիրառել տարբեր նախադասություններում և հաղորդակցական իրավիճակներում։ Չորրորդ՝ պետք է կարողանա ինքնուրույն օգտվել բառարաններից և թվային տեղեկատվական աղբյուրներից։ Հինգերորդ՝ պետք է զարգացնի բառի նկատմամբ քննադատական վերաբերմունք՝ կարողանալով որոշել՝ տվյալ բառը որ միջավայրում է նպատակահարմար գործածել։

Այսպիսով, բառագիտության ուսուցումը պետք է ուղղված լինի ոչ միայն «իմանալուն», այլև «կիրառելուն», «վերլուծելուն», «համեմատելուն», «ստեղծելուն» և «ինքնուրույն որոնելուն»։

3. Թվային գործիքակազմը բառագիտության դասերի կազմակերպման գործընթացում

Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս բառագիտական նյութը ներկայացնել տարբեր ձևերով՝ տեքստի, պատկերի, ձայնի, տեսանյութի, խաղի և ինտերակտիվ առաջադրանքի միջոցով։ Դրա շնորհիվ նույն բառը սովորողը կարող է ընկալել մի քանի զգայական և ճանաչողական մակարդակներում։

Google Forms և Microsoft Forms հարթակները կարող են կիրառվել բառագիտական նախնական և ամփոփիչ գնահատման համար։ Ուսուցիչը կարող է կազմել բազմընտրանի, համապատասխանեցման, բաց հարցերով և կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ։ Օրինակ՝ աշակերտին կարելի է ներկայացնել մի քանի բառ և առաջարկել առանձնացնել հոմանիշները, գտնել հականիշները կամ որոշել տվյալ բառի իմաստը։

Այս գործիքների առավելությունն այն է, որ ուսուցիչը կարող է արագ ստանալ արդյունքները և պարզել, թե որ թեմաներն են յուրաց-

վել և որոնք լրացուցիչ բացատրության կարիք ունեն։

Kahoot և Quizizz խաղայնացված ուսուցման գործիքները հատկապես արդյունավետ են բառագիտական նյութի ամրապնդման փուլում։ Kahoot-ի կամ Quizizz-ի միջոցով կարելի է կազմակերպել «Գտիր հոմանիշը», «Ո՞րն է հականիշը», «Ո՞ր նախադասության մեջ է բառը ճիշտ գործածված», «Գտի՛ր ավելորդ բառը», «Որոշի՛ր բառի իմաստը» տիպի առաջադրանքներ։ Խաղայնացումը բարձրացնում է սովորողների ներգրավվածությունը և հնարավորություն տալիս նույն նյութը բազմիցս կրկնել՝ առանց դասը վերածելու մեխանիկական վարժության։

Միաժամանակ անհրաժեշտ է խուսափել այնպիսի իրավիճակից, երբ խաղային բաղադրիչը դառնում է դասի հիմնական նպատակը։ Թվային խաղը պետք է ծառայի լեզվական կարողության ձևավորմանը, այլ ոչ թե փոխարինի բովանդակային ուսուցմանը։

Wordwall-ը հնարավորություն է տալիս ստեղծելու բառագիտական տարբեր տեսակի ինտերակտիվ առաջադրանքներ՝ համապատասխանեցում, դասակարգում, անիվ, բաց թողնված բառի լրացում, բառերի խմբավորում և այլն։ Օրինակ՝ ուսուցիչը կարող է ստեղծել առաջադրանք, որտեղ աշակերտները բառերը պետք է դասավորեն ըստ իմաստային խմբերի՝ «բնություն», «մարդու բնութագրում», «զգացմունքներ», «գործողություններ» և այլն։ Նման առաջադրանքները հատկապես արդյունավետ են տարրական և միջին դպրոցում, քանի որ թույլ են տալիս համատեղել տեսողական ընկալումը, խաղային գործունեությունը և լեզվական վերլուծությունը։

LearningApps հարթակը կարող է կիրառվել հոմանիշների, հականիշների, համանունների և հարանունների վերաբերյալ առաջադրանքներ կազմելու համար։ Օրինակ՝ աշակերտին կարելի է ներկայացնել բառերի խումբ և պահանջել համապատասխանեցնել յուրա-

քանչյուր բառ իր հոմանիշին կամ հականիշին: Ավելի բարդ մակարդակում կարելի է առաջարկել ոչ թե առանձին բառեր, այլ նախադասություններ, որոնցում սովորողը պետք է որոշի բառի իմաստային հարաբերությունը:

Padlet-ը արդյունավետ է համագործակցային բառապաշարային աշխատանքի կազմակերպման համար: Դասի ընթացքում ուսուցիչը կարող է ստեղծել ընդհանուր թվային պատ, որտեղ աշակերտները տեղադրում են տվյալ թեմային վերաբերող նոր բառեր, դրանց բացատրությունները, օրինակները, հոմանիշներն ու հականիշները: Օրինակ՝ «Բնության նկարագրություն» թեմայով դասի ժամանակ յուրաքանչյուր սովորող կարող է ավելացնել մեկ նոր բառ, դրա բացատրությունը և մեկ նախադասություն: Դասի վերջում ձևավորվում է ամբողջ դասարանի համատեղ թվային բառապաշարային շտեմարան:

Mentimeter-ը կարող է կիրառվել դասի սկզբում սովորողների նախնական գիտելիքները բացահայտելու և դասի ավարտին անդրադարձ կատարելու համար: Ուսուցիչը կարող է հարցնել՝ «Ի՞նչ բառեր եք կապում հայրենիք հասկացության հետ», «Ի՞նչ հոմանիշներ գիտեք գեղեցիկ բառի համար» կամ «Ի՞նչ բառով կբնութագրեք աշնանային բնությունը»: Սովորողների պատասխաններից ձևավորվող բառային ամպը կարող է դառնալ հետագա բառագիտական վերլուծության հիմք:

Canva-ն հնարավորություն է տալիս բառագիտական նյութը ներկայացնել ինֆոգրաֆիկայի, պաստառի, սխեմայի կամ փոքրիկ թվային գրքույկի միջոցով: Օրինակ՝ աշակերտները կարող են պատրաստել «Հոմանիշների աշխարհը», «Հայերենի դարձվածքները», «Բառի ճանապարհը» կամ «Բառերի ծագումը» թեմաներով թվային պաստառներ: Այս մոտեցումը զարգացնում է ոչ միայն բառապաշա-

րը, այլև սովորողի ստեղծագործական և ներկայացման կարողությունները:

4. **Թվային բառարանների կիրառումը բառագիտության ուսուցման գործընթացում**

Բառարանային աշխատանքի թվայնացումը բառագիտության ուսուցման կարևոր ուղղություններից է: Թվային բառարանները հնարավորություն են տալիս սովորողին ինքնուրույն ուսումնասիրել բառի իմաստը, ուղղագրությունը, արտասանությունը, հոմանիշները, հականիշները և գործածության օրինակները: Թվային բառարանների կիրառման դեպքում ուսուցիչը պետք է սովորեցնի ոչ միայն «գտնել բառը», այլև ճիշտ կարդալ բառարանային հոդվածը: Օրինակ՝ առաջադրանքը կարող է կառուցվել հետևյալ հաջորդականությամբ.

Գտնել բառը → կարդալ բացատրությունը → առանձնացնել հիմնական իմաստը → գտնել երկրորդական կամ փոխաբերական իմաստը → գտնել հոմանիշը → կազմել նախադասություն → կիրառել բառը սեփական խոսքում: Այսպիսի աշխատանքը ձևավորում է բառարանային գրագիտություն և սովորողին դարձնում ավելի ինքնուրույն:

5. Արհեստական բանականության գործիքների կիրառման հնարավորությունները

Վերջին տարիներին կրթական միջավայրում առանձնահատուկ նշանակություն են ստացել արհեստական բանականության մակարդակի բառագիտական առաջադրանքներ, կազմել նախադասություններ, առաջարկել բառի կիրառության տարբեր համատեքստեր, ստեղծել երկխոսություններ և վերլուծության համար նախատեսված տեքստեր: Օրինակ՝ ուսուցիչը կարող է խնդրել արհեստական բանականության գործիքին ստեղծել կարճ տեքստ, որտեղ ներառված են որոշակի հոմանիշներ, հականիշներ կամ բազմիմաստ

բառեր: Այնուհետև աշակերտները պետք է հայտնաբերեն դրանք և բացատրեն դրանց գործածության առանձնահատկությունները: Սակայն արհեստական բանականության կիրառումը պահանջում է նաև քննադատական մոտեցում: Սովորողը պետք է հասկանա, որ թվային համակարգի առաջարկած յուրաքանչյուր պատասխան ինքնաբերաբար ճիշտ չէ: Հետևաբար անհրաժեշտ է ստուգել բառի նշանակությունը վստահելի բառարաններում և այլ հեղինակավոր աղբյուրներում: Այս մոտեցումը միաժամանակ զարգացնում է ինչպես լեզվական, այնպես էլ թվային և տեղեկատվական գրագիտությունը:

6. Տեքստակենտրոն ուսուցումը որպես բառագիտական կարողությունների զարգացման հիմք

Բառը չի կարելի լիարժեք ուսումնասիրել մեկուսացված վիճակում: Նրա իմաստը հաճախ ամբողջությամբ բացահայտվում է միայն համատեքստում: Այս պատճառով բառագիտության դասերում նպատակահարմար է կիրառել տեքստակենտրոն ուսուցում: Ուսուցիչը կարող է ընտրել գեղարվեստական, հրապարակախոսական, գիտահանրամատչելի կամ տեղեկատվական տեքստ և հանձնարարել սովորողներին առանձնացնել անծանոթ բառերը, բացատրել դրանց իմաստը, գտնել հոմանիշներն ու հականիշները, որոշել բառի ոճական արժեքը և կազմել նոր նախադասություններ: Առավել արդյունավետ է, երբ նույն բառը ուսումնասիրվում է տարբեր տեքստերում: Այդ դեպքում սովորողը տեսնում է, որ բառի իմաստը կարող է փոխվել՝ կախված հաղորդակցական իրավիճակից: Օրինակ՝ «արմատ» բառը կարելի է ուսումնասիրել ինչպես բուսաբանական, այնպես էլ փոխաբերական նշանակությամբ՝ «ծառի արմատ», «երևույթի արմատները», «բառի արմատ»: Այսպիսի համեմատությունը նպաստում է բազմիմաստության ընկալմանը:

7. Բառագիտության դասի կազմակերպման թվային մոդել

Բառագիտության դասը կարելի է կազմակերպել հինգ հիմնական փուլով.

Առաջին փուլ՝ մոտիվացիա: Դասը սկսվում է թվային հարցմամբ, բառային ամպի ստեղծմամբ կամ կարճ տեսանյութի դիտմամբ: **Երկրորդ փուլ՝ նոր նյութի ներկայացում:** Ուսուցիչը ներկայացնում է բառագիտական հասկացությունը՝ օգտագործելով օրինակներ և տեսողական նյութեր: **Երրորդ փուլ՝ հետազոտական աշխատանք:** Սովորողները աշխատում են թվային բառարաններով, տեքստերով և ինտերակտիվ առաջադրանքներով: **Չորրորդ փուլ՝ կիրառություն:** Սովորողները նոր բառերը կիրառում են նախադասություններում, երկխոսություններում, փոքրիկ պատմություններում կամ ստեղծագործական առաջադրանքներում: **Հինգերորդ փուլ՝ գնահատում և անդրադարձ:** Դասի ավարտին կիրառվում են Quizizz, Google Forms, Mentimeter կամ այլ թվային գործիքներ: Այս մոդելի կարևոր առանձնահատկությունն այն է, որ թվային գործիքը ինքնանպատակ չի դիտարկվում: Այն պետք է ընտրվի՝ ելնելով դասի կոնկրետ նպատակից:

8. Խաղայնացված ուսուցումը բառապաշարի հարստացման գործընթացում

Խաղայնացումը կարող է էապես բարձրացնել սովորողների ակտիվությունը հատկապես այն դեպքերում, երբ բառագիտական նյութը պահանջում է բազմակի կրկնություն: Կարելի է կազմակերպել «Բառային մրցավազք», «Գտի՛ր զույգը», «Ո՞վ եմ ես», «Բառային շղթա», «Գաղտնի բառ», «Բառային ածուրդ» և այլ խաղեր: Թվային հարթակում աշակերտները կարող են հավաքել միավորներ, ստանալ վիրտուալ նշաններ կամ անցնել տարբեր մակարդակներ: Սա-

կայն խաղայնացված ուսուցման հիմնական սկզբունքը պետք է լինի ոչ թե մրցակցությունը, այլ լեզվական առաջադրանքի բովանդակային յուրացումը։

9. Համագործակցային թվային նախագծերը

Բառագիտության ուսուցման արդյունավետ ձևերից է նախագծային աշխատանքը։ Սովորողները կարող են խմբերով իրականացնել «Մեր համայնքի բառապաշարը», «Ժամանակակից հայերենի նորաբանությունները», «Հայերենում տարածված օտարաբանությունները», «Հայկական դարձվածքների թվային բառարան» կամ «Բառերի պատմությունը» նախագծերը։ Օրինակ՝ «Մեր համայնքի բառապաշարը» նախագծի շրջանակում աշակերտները կարող են հավաքել իրենց բնակավայրում գործածվող տեղական բառերն ու արտահայտությունները, գրանցել դրանց նշանակությունը, կիրառության օրինակները և հնարավոր տարբերակները։ Նման աշխատանքը բառագիտությունը կապում է սովորողի իրական կենսափորձի հետ և դարձնում այն ավելի հետաքրքիր ու կիրառական։

Թվային գործիքների կիրառման հնարավոր սահմանափակումները

Թվային գործիքների կիրառումը, չնայած բազմաթիվ առավելություններին, չի կարող ամբողջությամբ փոխարինել ուսուցչի մասնագիտական աշխատանքին։ Առաջին խնդիրը տեխնոլոգիական անհավասար հասանելիությունն է։ Միշտ չէ, որ բոլոր սովորողներն ունեն անհրաժեշտ սարքավորում կամ կայուն համացանցային կապ։ Երկրորդ խնդիրը թվային գործիքների նկատմամբ չափազանց մեծ կախվածության վտանգն է։ Եթե դասի յուրաքանչյուր փուլ վերածվում է էկրանի առջև կատարվող առաջադրանքի, կարող է նվազել կենդանի հաղորդակցության և բանավոր խոսքի դերը։ Երրորդ խնդիրը տեղեկատվության հավաստիության խնդիրն է։ Համացանցային

բոլոր աղբյուրները հավասարապես վստահելի չեն: Հետևաբար անհրաժեշտ է սովորողների շրջանում ձևավորել տեղեկատվության աղբյուրները քննադատաբար գնահատելու կարողություն: Բառագիտության ուսուցումը ժամանակակից դպրոցում պահանջում է մեթոդական նոր մոտեցումներ, որոնք պետք է միավորեն լեզվական գիտելիքը, հաղորդակցական գործունեությունը և թվային կրթական հնարավորությունները: Թվային գործիքների նպատակային կիրառումը հնարավորություն է տալիս բառագիտական նյութը դարձնել ավելի մատչելի, տեսանելի և ինտերակտիվ: Kahoot-ի, Quizizz-ի, Wordwall-ի, Learning Apps-ի, Padlet-ի, Mentimeter-ի, Canva-ի, Google Forms-ի և այլ գործիքների կիրառումը կարող է արդյունավետորեն աջակցել բառապաշարի հարստացմանը, բառերի իմաստային հարաբերությունների բացահայտմանը, սովորողների ինքնուրույն աշխատանքի և համագործակցային բառերի իմաստային հարաբերությունների բացահայտմանը, սովորողների ինքնուրույն աշխատանքի և համագործակցային կարողությունների զարգացմանը: Միաժամանակ թվային գործիքների կիրառումը պետք է ենթարկվի մանկավարժական հստակ նպատակների: Տեխնոլոգիան ինքնին չի ապահովում ուսուցման բարձր արդյունավետություն: Դրա արժեքը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է այն նպաստում սովորողի լեզվական գործունեությանը: Բառագիտության ուսուցման առավել արդյունավետ մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ շղթայով՝ **տեսական գիտելիք→թվային որոնում→իմաստաբանական վերլուծություն→համատեքստային կիրառում→ստեղծագործական գործունեություն→թվային գնահատում→ինքնանդրադարձ**:

Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս հաղթահարել բառագիտության դասավանդման ավանդական սահմանափակումները և ուսուցումը տեղափոխել գիտելիքի փոխանցումից դեպի կա-

րողությունների ձևավորում: Հատկապես կարևոր է, որ թվային միջավայրը չհակադրվի գրքին, ընթերցանությանը և կենդանի խոսքին: Ընդհակառակը, այն պետք է ծառայի դրանց զարգացմանը: Թվային բառարանը կարող է խթանել բառարանային աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, առցանց հարթակը՝ համագործակցային գործունեությունը, արհեստական բանականությունը՝ լեզվական նյութի ստեղծումն ու վերլուծությունը, իսկ խաղայնացված առաջադրանքը՝ սովորածի ամրապնդումը:

Եզրակացություն

Կարելի է եզրակացնել, որ դպրոցում բառագիտության ուսուցման արդյունավետության բարձրացումը պահանջում է համալիր մոտեցում: Տեսական գիտելիքների և գործնական կիրառության միջև հավասարակշռության ապահովումը, ժամանակակից տեխնոլոգիաների ու ինտերակտիվ մեթոդների ներդրումը, ինչպես նաև տեքստակենտրոն ուսուցումը հնարավորություն են տալիս հաղթահարել առկա մարտահրավերները: Արդյունքում սովորողները ոչ միայն հարստացնում են իրենց բառապաշարը, այլև ձևավորում են բարձր լեզվամտածողություն և հաղորդակցական մշակույթ:

Այսպիսով, բառագիտության ժամանակակից ուսուցման հիմնական խնդիրը ոչ թե ավանդական մեթոդներից ամբողջական հրաժարումն է, այլ դրանց արդյունավետ համադրումը թվային և ինտերակտիվ գործիքների հետ: Այդ համադրումն է, որ կարող է ձևավորել բառապաշարով հարուստ, լեզվականորեն գրագետ, քննադատաբար մտածող և ժամանակակից հաղորդակցական միջավայրում արդյունավետ գործող սովորող:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 30-ի N 44-Ն հրաման, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին»:
Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Ե., 2004:
Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 2018:
ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում՝ «Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին»: Փաստաթուղթը սահմանում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 30-ի N 44-Ն հրաման՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1–6-րդ, «Հայոց լեզու» 7–12-րդ, «Գրականություն» 7–9-րդ և «Հայ գրականություն» 10–12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին»:

Davtyan Alvina, **Arshakyan Erazik**, **Badalyan Diana - Teaching Vocabulary in Schools: Challenges and Solutions**. - Vocabulary instruction plays a foundational role in school language education, serving as a primary driver for developing students' cognitive abilities, communication skills, and expressive fluency. However, teaching lexicology in contemporary secondary schools encounters significant challenges, including student disengagement from traditional reading, the influence of informal digital communication, and an overemphasis on theoretical memorization rather than practical application.

This article examines the primary methodological and pedagogical obstacles faced by Armenian language educators today and proposes systematic solutions to enhance vocabulary acquisition. Key strategies discussed include the integration of interactive learning frameworks, thematic word mapping, digital tools, language corpora, and text-based contextual learning. By shifting from passive memorization to active communicative exercises, educators can successfully foster semantic awareness, stylistic precision, and lifelong language proficiency among students.

Keywords: lexicology, school education, vocabulary enhancement, methodology, challenges, interactive methods, semantics.

Davtyan Alvina, Vardenik Educational Complex, Gegharkunik Region, RA, Armenian Language and Literature Teacher.

Arshakyan Erazik, Astghadzor Secondary School, Gegharkunik Region, RA, Armenian Language and Literature Teacher.

Badalyan Diana, Secondary School No. 170 named after A. Kemurjyan, Yerevan, RA, English Language Teacher.

Давтян Алвина, Аршакян Еразик, Бадалян Диана - Обучение лексикологии в школе: проблемы и решения. - Обучение лексикологии занимает ключевое место в школьном языковом образовании, способствуя развитию мышления, коммуникативных навыков и богатого словарного запаса учащихся. В условиях современной школы преподавание лексикологии сталкивается с рядом существенных проблем, таких как снижение интереса к чтению, преобладание упрощенной цифровой речи и теории над практикой. В данной статье анализируются методические трудности, возникающие при обучении лексикологии армянского языка, и предлагаются эффективные пути их решения. Рассмотрены такие современные подходы, как использование интерактивных методов, концептуальных карт слов, цифровых технологий, языковых корпусов и контекстуального обучения на основе текстов. Переход от пассивного заучивания к актив-

ной речевой практике позволяет сформировать у школьников семантическую чувствительность и языковую культуру.

Ключевые слова: лексикология, школьное образование, обогащение словарного запаса, методика, вызовы, интерактивные методы, семантика.

Давтян Алвина, Образовательный комплекс с. Варденик, Гегаркуникская область, РА, учитель армянского языка и литературы.
Аршакян Еразик, Средняя школа с. Астгадзор, Гегаркуникская область, РА, учитель армянского языка и литературы.
Бадалян Диана, Старшая школа № 170 им. А. Кемурджяна, г. Ереван, РА, учитель английского языка.